



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ N° 05-Լ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ  
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2011թ. ԱՊՐԻԼԻ 26-ի «ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ  
ԿՆԻՔՆԵՐԻ, ԴՐՈՇՄԱԿՆԻՔՆԵՐԻ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ  
ԳՈՐԾԻ ԷԶԵՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ  
06-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասով և 43-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

## ՈՐՈՇՈՒՄ Է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011թ. ապրիլի 26-ի «Դատավորների կնիքների, դրոշմակնիքների գծապատկերները և դատական գործի էջերի վավերացման կարգը հաստատելու մասին» թիվ 06-Լ որոշման 1-ին հավելվածում՝

1. Լրացնել ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորներ Արթուր Աբրահամյանի և Գրետա Արզումանյանի, ԼՂՀ վերաքննիչ դատարանի դատավոր Հովհաննես Գրիգորյանի, ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորներ Դավիթ Ավանեայանի և Կարեն Մելքումյանի անվամբ կնիքների գծապատկերները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորներ Զոյա Օհանյանի և Շուրա Օհանյանի, ԼՂՀ վերաքննիչ դատարանի դատավոր Գրետա Արզումանյանի, ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորներ Արթուր Աբրահամյանի և Հովհաննես Գրիգորյանի անվամբ կնիքների գծապատկերները:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ԱՎԱԳՅԱՆ**

